
**ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈՋՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Յուրաքանչյուր դավանանքի հիմքում ընկած է հավատը գերագույն ուժի հանդեպ, որը խորհրդանշվում է որպես աստված:

Հավատ և *հավատացյալ* բառերը բարբառներում ունեն լայն տարածվածություն և գործածություն: Բարբառային բառապաշարում *հավատ* (*հավատայ*) հասկացությունն արտահայտվում է մի շարք հնչատարբերակներով, ընդ որում՝ ոչ այնքան տարածված հոմանիշային շարքով: Գրական այդ ձևը բարբառներում բազմիմաստ է, այսինքն՝ «հավատարմություն, վստահություն (վստահել)» իմաստից բացի՝ ունի «դավանանք (դավանել)» կրոնական իմաստ, որը որոշ տարածքներում հաճախ տարբերակվում է հնչյունական միջոցներով:

Հավատ գրական տարբերակը գործածվում է զգալի թվով բարբառներում (Ագուլիս, Ղարաբաղ, Բուրդուր, Թիֆլիս, Լոռի, Շամախի, Ախալքալակ, Մեծ Սամսար և այլն): Բառի նախաշեշտ *հա՛վատ* տարբերակն է գրանցված Կարճնանում և Մեղրիում: Գրական ձևը հիմնականում բնորոշ է արևելյան խմբակցության բարբառներին: Սա կարելի է բացատրել ոչ միայն գրական արևելահայերենի պետական լեզու լինելու, այլև կրոնական բառերի՝ որպես գրական փոխառությունների ոչ միշտ բարբառային հնչյունափոխության ենթարկվելու հանգամանքներով:

Բարբառային այլ վայրերում առկա են ձայնավորական և բաղաձայնական հնչատարբերակներ՝ *հավդում*¹ (Կեսարիա), *հավուդ* (Սվեդիա, Խտրբեկ), *հավա*² (Ասլանբեկ), *հրվադ* (Սասունի Արփի, Ընգուզնակ, Սադդուն, Փսանքի Մըշկեդ, Հոսներ բնակավայրեր), *հը՞վը՞դ* (Գեղեգուզան) և այլն:

Մի շարք վայրերում, որպես բաղաձայնական օրինաչափություն

¹ Բարբառային օրինակները բերվում են ըստ բարբառագիտական մենագրությունների, բարբառային բառարանների, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերի, բարբառախոս վայրերում մեր կատարած հարցումների:

² Աստղանիշով են փոփոխյալ ձևերը: «Ասլանբեգի ենթաբարբառը գրեթե ամեն բաղաձայնով վերջացող բառերի համար երկու ձև ունի. ա. *բացարձակ* ձև, որ բառի անկախ ձևն է, և բ. փոփոխեալ ձև, որ բառի վերջին բաղաձայնի կրճատմամբ կամ թեթևացմամբ է կազմում...» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 23):

(սակավ բացառություններով), ինչպես և սպասելի էր, բառասկզբի *h*-ի դիմաց ունենք *ju*՝ *խավատ* (Մալաթիա, Ոզմ, Արծկե, Այնթապ, Արճակ, Մարաղա), բայց և, հակառակ տվյալ վայրի խոսվածքներին բնորոշ բաղաձանական օրենքների, առկա է նաև բառասկզբի *h* հազագի անկում՝ *ավատ* (Աղբակի Հասպըստան, Բիթլիսի Դերըկ, Արճակի Լիմ, Սիսկյա և Միսկներ, Փոքր Բուրվարի Ղարաքյարիս, Փերիայի Ղարդուն, Բայազետի Մուսուն) և այլն:

Ինչպես նկատելի է, Վասպուրականի, Դիադին-Բայազետի և Պարսկահայքի նշված տարածքներում չի գործել *h > ju* օրինաչափ բաղաձայնական հնչյունափոխությունը: Հայտնի է, որ բարբառներում բառասկզբում սովորաբար ընկնում է ժամանակի ընթացքում *h* հազագի փոխված գրաբարյան *j*-ն (Յարութին *> Արութին // Արթին*, յաջողութին *> աչոխութեն*, Յիսուս *> Իսուս* և այլն), իսկ *hn*-ն սովորաբար դառնում է *ju*: Արդյոք *p* տվյալ դեպքում կարող ենք ասել, որ *խավատ*, *խավատալ* բառերի հնագույն ձևը եղել է *յավատ*, *յավատալ*: Չի բացառվում կապը նաև *յաւէտ* բառի հետ³: Կարելի է ենթադրել, որ *խավատ* գրական ձևի *խավատ* և *ավատ* տարբերակներով բարբառախոսները զանազանում են տվյալ հասկացության աշխարհիկ և կրոնական բովանդակությունը: Ի նպաստ այս ենթադրության՝ կարելի է վկայաբերել Վասպուրականի տարածքի Վերին Հայոց ձորի Հորմորուր բնակավայրի *խավատ* և *ավատ* հնչատարբերակների գործածությունը տարբեր՝ աշխարհիկ և կրոնական իմաստներով:

Մի շարք տարածքներում *խավատ* բազմիմաստ բառի կրոնական գործառույթն ընդգծելու համար, բաղաձայնական և ձայնավորական այլևայլ հնչյունափոխություններին զուգահեռ, բառին ավելանում է *p* (*> l* կամ *q*) հոգնակերտը, օրինակ՝ *խավողք* (Բեյլան), *հելողք* (Քեսաբ), *խավաղգ* (Ակն, Պուլիս), *խավաթք* (Համշեն, Ռոդոսթո), *խավոթք* (Չեյթուն), *խավօտք* (Մարաշ, Բեյլան, Անտիոքի Մովրլուխ և Աթըխ): Ասլանբեկի բարբառում *p* (*> q*) վերջնահնչյունից առաջ առկա է *տ* ձայնորդի անկում (*խավա*q*):

Հաջրնի բարբառին բնորոշ են *խավօղ* և *p* հոգնակերտով *խավողք* ձևերը, որը, կարծում ենք, նույնպես աշխարհիկ և կրոնական իմաստները զանազանելու միջոց է:

Ինչպես ցույց են տալիս օրինակները, *p* հոգնակերտի առկայությունը, որով բառն ստանում է կրոնական իմաստ, հավաստիորեն բնորոշ է արևմտյան տարածքի բարբառներին՝ բացառությամբ պարսկահայ Փերիայի Շուրիշկյան, Միլակերտ և Ղարդուն, Քյազագի Գուլիզարդ և ԼՂՄ արտակերտի Չափար բնակավայրերի:

³ «Հաւանութիւն կամ դաւանումն հաստատ. հա՛, այո՛ յաւէտ» (Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 76):

Հավատ բառին որպես նույնարմատ հոմանիշ Կարնո բարբառում գործածվում է *դին-հավադ* կրկնավորը, որի առաջին *դին* (թուրքերեն *din*՝ «կրոն, հավատք») բաղադրիչով նույնպես ընդգծվում է բարդության կրոնական բովանդակությունը (թարգմանաբար՝ «հավատ-հավատ»)։ *Դին* արմատ-նախամասնիկը տվյալ դեպքում ունի մեկնողական՝ աշխարհիկ բովանդակությունից տարանջատող արժեք։

Հավատ բառի տարարմատ հոմանիշները օտարաբանություններ են՝ *իման* (Քանաքեռ), *մասար* (Վան), *քաֆր*⁴ (Քեսաբ) և այլն։

Պետք է նկատել, որ բարբառային տարածքներին ընդհանրապես բնորոշ չեն *դավանանք* գրական ձևը կամ համապատասխան հնչատարբերակները։ Միայն արևմտյան խմբակցության Մուշի բարբառի Բուլանուխի խոսվածքում հանդիպում ենք *դավանանք* բառին՝ *դոր դավանանք, դար բ՛ըլավ* ասացվածքում («որտեղ հավատ՝ բլուրը՝ սարը փլվեց, այսինքն՝ հավատով կարելի է սարեր շրջել»)։ Նույն տարածքում առկա է *դ՛ավանիլ* բայը՝ որպես հոմանիշ *հավատալ* բառի։

Հավատալ բայը գրական լեզվի հնչյունական կազմը պահպանել է մի շարք տարածքային տարբերակներում (Ախալցխա, Ախալքալակ, Երևան, Շամախի, Փերիա և այլն)։ Բազմաթիվ բարբառների և խոսվածքների բնորոշ են հնչատարբերակներ, ընդ որում՝

ա լծորդով՝ *հրվրդալ* (Մասուն, Տավորիկ, Շատախի Գյարմավ), *հրվատալ* // *հրվադալ* (Գորիս, Լոռի, Նախիջևանի Կյադ, Վերին Ճամբարակ, Մառնեուլի Դամիա), *հավտալ* // *հավդալ* (Նինոծմինդայի Գանձա, Մանազկերտի Բադնոս, Խարբերդի Բազմաշեն), *հավըտալ* (Ղարադաղի Վինան), *վըհատալ* (Ղարաբաղ, Նախիջևանի Տանակերտ), *հուվատալ* (Բուլխս-Խաչեն, Մարտակերտ), *հավդընալ* (Մեքաստիա, Խուրթի Բիջունիկ, Բուլանուխի Կոպ, Մուշի Հադգոն), *խա՛վատալ* (Մոկս, Վանի Այուր, Խոշաբի Հուրթուկ),

է լծորդով՝ *հրվատէլ* (Ասկերանի Խանաբադ),

ի լծորդով՝ *հրվատիլ* (Ագուլիս, Մեղրի, Կարճևան, Նախիջևանի Փառակա, Իջևանի Գետահովիտ), *էվդիլ* (Քեսաբ),

ու լծորդով՝ *հավդընուլ* // *հավդընուլ* // *հավդուլ* // *ավդուլ* (Համաշեն, Արդվինի Խոփա և Բորչկա),

օ լծորդով՝ *հավադօլ* (Բեյլան, Ֆուռնոս-Ուլնիա) և այլն։

Մի շարք վայրերում առկա հնչյունափոխություններն ուղեկցվում են բառակազմի *հ* հազագի անկումով.

ա լծորդիչով՝ *ավատալ* (Շատախի Արմշատ և Տղացպար, Մոկսի Մամռտանց), *ավտընալ* (Ապարանի Վարդաբլուր, Բիթլիսի Քըխսամ և Քոշկ, Այնթապ), *ավդալ* (Երզնկա, Խոտրջուրի Միջին թաղ, Քղիի Հար-

⁴ Ժամանակակից թուրքերենում *kafir* բառը գործածվում է «անհավատ, անկրոն» արհամարհական իմաստով։

դիֆ), *ավղընալ* (Տիգրանակերտ, Սևերեկ),

ի լծորդով՝ ավղիլ (Սվեդիա),

օ լծորդով՝ ավղօլ (Հաջըն, Ջեյթուն) և այլն:

Ինչպես ցույց են տալիս օրինակները, գրական լեզվի *ա լծորդով* ձևերից բացի, հայերենի բարբառներում հանդիպում են նաև *է, ի, ու, օ* լծորդներով տարբերակներ, որոնք տվյալ բարբառին կամ խոսվածքին բնորոշ հնչյունափոխության արդյունք են: Վան-Վասպուրականում, Տարոնի դաշտավայրում գործածվող *ավատալ* անորոշ դերբայով կազմված՝ սահմանական եղանակի ներկա ժամանակաձևում (*կը խավատալ*) վերականգնվում է բառակազմի *հ* հազագին համապատասխանող *խ* խուլ բաղաձայնը: *Կը խավատալ*-ը բնորոշ է նաև Խոյ-Մարաղայի տարածքին, որտեղ այն պայմանական կամ ենթադրական ժամանակաձև է:

Հավատալ բայը Բեյլանի, Անտիոքի և Կեսարիայի բարբառներում ունի թուրքերեն *inanmış* և հայերեն *անել* կամ *լինել* բաղադրիչներով կազմված հարադրավոր հոմանիշներ՝ *ինանմիշ ըննիլ* (Բեյլան, Անտիոքի Մովրլուխ և Աթըխ) // *ինանմըշ ընալ* (Կեսարիա), *ինանմիշ ըլլալ* (Ռոդոսթո) և այլն⁵:

Հայերենի տարածքային տարբերակներում կրոնաեկեղեցական բովանդակություն են ստանում *հավատ* բառին հականիշ նույնարմատ և տարարմատ հոմանիշները: Բարբառներում *անհավատ* նախածանցավոր կազմությունն արտահայտվում է հնչյունական հետևյալ գուգաձևություններով՝ *անավատ* (Արարատյան), *անավաղ* (Մուշ), *անավատ(կ)* (Մալաթիա), *անհավուղ* (Արամո), *չընչավատ* (Երզնկա), *չնչավատ* (Ալաշկերտ, Արագածոտնի Գեղաձոր), *անավօտ* (Վան, Բուլանուխ), *անավօղ* (Բեյլան) և այլն:

Հակված ենք կարծելու, որ Վանի, Բուլանուխի և Բեյլանի տարածքային տարբերակներում առկա *անավօտ*, *անավօղ* ձևերը ոչ թե *անհավատ* բառի հնչատարբերակն են, այլ կազմված են *ան+ալ+օտ* բաղադրիչներից (իմա՝ «առանց այգաբացի, լուսածագի»), մանավանդ որ արևմտյան իմբակցության հարավկենտրոնական բարբառախմբին պատկանող Վանի բարբառի հնչյունական օրենքների համաձայն այդ բառը պիտի հնչեր *անխավատ*: Կարծում ենք՝ հօգուտ այս վարկածի են խոսում նաև վանեցիների հետևյալ առածները. «*Լաճն առաւօտ, մէրն անաւօտ,*» «*Մահը մօտ, ինսան անաւօտ*»⁶:

⁵ 2010 – 2015 թթ. Համշենի տարածքում մեր կատարած բարբառային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայիս հովհաննակի բարբառը հարուստ է թուրքերեն + հայերեն կառույցի բայական հարադրություններով:

⁶ Գ. Շերենց, «Վանայ սագ», Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների, հանելուկների, օրհնութիւնների եւ անէծքների, Բ (տեղական բարբառով), տպ. Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1899, էջ 141, 145:

Անհավատ իմաստն են արտահայտում *անասվաց* (Մուշավա), *թոնրակցի*⁷ (Բասեն), *կրոնպաշտ* // *կուռ ու կրոնպաշտ* (Կարսի Տայլար), *զրոնբաշտ* // *քար կրոնբաշտ* (Մուշ) և այլ հոմանիշներ: Ինչպես նկատում ենք, վերջին երկու օրինակում *կուռ* և *քար* բաղադրիչները սաստկացնում, ընդգծում են *անհավատ* հասկացության իմաստը:

Անհավատ է նշանակում *հեթան* (Այնթապ, Կեսարիա, Բուլանուխ), *հէտանոս* (Մեղրի) բազմիմաստ բառը, որն ունի նաև «օտարագրի» իմաստը:

Անհավատ բառի հոմանիշներից են *գյավուր*, *կյավուր* *օղլու կյավուր*⁸ (Բութանիա), *քյաֆըր* (Բուրդուր), *կա՛ւվըր* (Քեսաբ), *պօքճի*⁹ (Նիկոմեդիա), *յեզիդ*, *յեզիդի ջընս*¹⁰ (Ագուլիս) արաբաբանությունները և *մասաբսրզ* (Վան), *իմանսրզ* (Քանաքեռ) թուրքաբանությունները: Հմմտ.՝ «*Այլազգներ կա թափնեն՝ քըշտեցէք կէավուրին*»¹¹ (Կեսարիա): Հաղորդի բարբառում *գյավուր* բառն ունի «անընդունելի, խղճի դեմ արարք կատարած» իմաստը («*Վո՛ւյ, գյավուր ը՛ս, ախճի՛, էտ հի՛նչ ըս ըրալ*», Հաղորդի Տումի): Մուշի բարբառի Ալաշկերտի խոսվածքում *անհավատ դառնալ* կամ *հավատափոխ լինել* հարադրավոր բայերին հոմանիշ է *թուրկընալ*-ը («*Աստված պաղիճ ա տրվե ընձի, տրդես թուրկըծե*»)¹², Պոլսի բարբառում՝ *տաճկընալ*-ը կամ *տաժկուլթան շառթ*¹³ *տալը*, որից էլ՝ «*Տաժկուլթան շառտ չըտուվալ*»¹⁴ ասացվածքը:

Բարբառախոսները բացասական բնորոշումներով տարբերակում են նաև դավանանքի ոչ հաստատուն լինելը, ինչպես նաև այլադավան դառնալը: Հավատափոխ հայերը, ըստ Պոլսի բարբառի, կոչվում են *մուլհիդ* (արաբերեն՝ ملحد «անաստված»): «Եթե մի քրիստոնյա խոսք տված լիներ մահմեդական դառնալու, այլևս իրավունք չուներ խոստումից հրաժարվելու: Հակառակ դեպքում *մուլհիդ* (ուրացող) կլիներ և

⁷ IX-XI դարերում Հայաստանում և Բյուզանդիայում տարածված *թոնրակյան* քրիստոնեական աղանդի անունից: Աղանդի կենտրոնը եղել է Մեծ Հայքի Ապահունիք գավառի Թոնդրակ գյուղը (տե՛ս **Հ. Մանուչարյան**, Պողոս Տարոնացին թոնդրակյան շարժման մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1974, № 4, էջ 115-122):

⁸ «Կեավուր, ըստ ասից ոմանց, կերնի *կովապաշտ* ըսել է, և աս մասնատրապէս անյիշելի ժամանակներ է ի վեր, Քրիստոնէից յատկացեալ բառ մը ի դիմաց մահմետականաց» («Յաւերժահարս», հանդէս կիսամսեայ, Ջմիրոնիա, 1862, № 12, էջ 97):

⁹ «Պօքճի բառը յոյնը առ հայն միայն կուղղէ և գոր ինք *պօքսի* կարտասանէ» («Յաւերժահարս», հանդէս կիսամսեայ, Ջմիրոնիա, 1862, № 12, էջ 98):

¹⁰ Ըստ իրանագետ Վ. Ոսկանյանի՝ «բառը կապվում է Յազդի բին Մուավիայի անձի հետ, որի օրոք սպանվել է շիական իմամ Հուսէյնը, ուստի և շիաների մեջ այդ խալիֆի անունն ստացել է *անհավատ* իմաստը. փոխաբերաբար հայերենին է անցել կամ պարսկերենից, կամ աղբրեջաներենից» (բանավոր հաղորդում):

¹¹ **Ս. Անթոյան**, Կեսարիայի բարբառը, Եր., 1961, էջ 342:

¹² **Ք. Մաղաթյան**, Ալաշկերտի խոսվածքը, Եր., 1985, էջ 157:

¹³ Թուրքերեն şart «պայման»:

¹⁴ **Հ. Աճառյան**, Պոլսահայ անգիր բանասիրություն, Եր., 2009, էջ 134-135:

կքարկոծվեր»¹⁵: Նոր Նախիջևանի բարբառում հավատուրացին տրվում է *մուրթատ* անունը («*Կը տաճիկցուն, մուրթատ իս կ'ասին*»): Կարծում ենք՝ *մուրթատ* բառը *մուլհիդ* արաբաբանության փոփոխության հետևանքով է առաջացել: Վանեցիները այդպիսիներին անվանում են *առուն թըռած*, իսկ թույլ հավատ ունեցողին (*թուլախավատին*) դավանափոխության համոզելուն՝ *խավտեխան անե*: Ինչպես նկատում ենք, վերջին օրինակում *հ>խ* օրինաչափ անցումն արդեն կայացած հնչու-նափոխական իրողություն է:

Ադյամանի, Խարբերդի, Բինգյուլի, Երզնկայի, Մուշի և այլ վայրերի թրքախոս և քրդախոս հայերից լսեցինք *դոնմե* անվանումը, այսինքն՝ «նախկին հավատը փոխած, ուրացած»¹⁶: Մալաթիայի բարբառում *մե-դավոր* ածականը բառիմաստի նեղացման հետևանքով ձեռք է բերում «կրոնի դեմ մեղանշող» իմաստը:

Ինչպես հայտնի է, բարբառախոս հայերի մեծամասնությունը (բացառությամբ Արևմտյան Հայաստանի տարածքում ապրողների, Չենլի-հեմշինի և Միջին Ասիայի որոշ տարածքների հայության) Հիսուս Քրիստոսի վարդապետության հետևորդ է և կոչվում է *քրիստոնյա*: Գրական հայերենին բնորոշ հնչաձևն է գործածվում Կարնո, Մուշի, Նոր Նախիջևանի, Ջուղայի, Արարատյան և այլ բարբառներում:

Արևելյան և արևմտյան, ինչպես նաև Պարսկահայքի բարբառներին հատուկ է Մեսիային բաղադրյալ հատկանվան միայն մեկ բաղադրիչով դիմելու եղանակը՝ կա՛մ *Հիսուս*, կա՛մ *Քրիստոս*, իսկ եթե երկուսն էլ գործածվում են, ապա ո՛չ միասին: Այսպես՝ *Իսու* (Մուշի Առինջվանք), *Իսուս* (Տիգրանակերտ), *Իսսոս* // *Քրըրսոս* (Սվեդիա), *Յոսոս* // *Քրիստոս* (Գորիս), *Քիրիստոս* (Ուրմիա), *Քրըրստոս* (Խտրբեկ) և այլն: Հմնտ.՝ *Քրըրստիսեն սաղ թեյվ թըդ ըննու ըրվատ*՝ «Քրիստոսի աջը գլխիդ լինի»¹⁷ (Սվեդիայի Խտրբեկ):

Արևմտյան տարածքի բարբառներում, թերևս, առավելապես հակում կա գործածելու Մեսիայի անվան առաջին բաղադրիչը՝ *Հիսուս*, իսկ արևելյան տարածքում՝ *Քրըրիստոս*, բնականաբար՝ համապատասխան հնչատարբերակներով:

Քեսաբի բարբառում հատկանվան երկու բաղադրիչները կարող են գործածվել միաժամանակ. *Եա Իսսոս Քրըրստոս, տըսնըվըրկը տիճէր միէգ փոս*: «Ո՛վ Հիսուս Քրիստոս, տասներկու տաճիկը՝ մեկ փոս»¹⁸:

Բարբառային մի շարք տարածքներում (Արարատյան, Մուշ, Բայազետ, Սվեդիա և այլն), նաև ընդհանուր խոսակցական հայերենում

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Թուրք. Donme, ուու. «превращение», հայ. «վերածում, կերպարանափոխում»:

¹⁷ Գ. Հանանյան, Սվեդիայի բարբառը (Խտրբեկի խոսվածք), Եր., 1995, էջ 159:

¹⁸ Յ. Չոլաքեան, Քեսաբի բարբառը, Հալեպ, 1986, էջ 361:

կիրառվում են *Իսու* // *Իսսու Քրիստոս*, *Իսու քեզ Քրիստոս* // *Իսու - Քրիստոս քեզ* // *Իսսոս ու Քրիստոս*՝ զարմանք, տարակուսանք, հանդիմանություն արտահայտող ձևերը: Մալաթիայի բարբառն ունի «*Իս քիսը աշկըղ մըղնա*» անեծքը, որն ուղղվում է Հիսուս Քրիստոսին շշուկով աղոթողին (*իս քիս* = Հիսուս Քրիստոս)¹⁹:

Առաձնեքում և ասացվածքներում գործածական է միայն *Քրիստոս* բաղադրիչը՝ երբեմն փոխաբերական իմաստով: Օրինակ՝ *Քրիստոսի կերպարանք*՝ «երկնային մարմիններից մեկի անվանում» (Ձեյթուն), *Քրիստոսի մոխրաթավալ*՝ «ավանակ» (Կարս), *Քրիստոս կը փըսփըսա*՝ 1. «սեր ու խաղաղություն է տիրում» (Կյուրին, Քղի), 2. «աստիկ լուռ է» (Պոլիս): *Տունը Քրիստոս կը փըսփըսա* «տանը մարդ չկա» (Արաբկիր)՝ *Քրիստոսի հետ փըսփըսում ա, մեռելին տաս կը հարի*՝ «շատ ընտիր կերակուր է» (Արարատյան): *Մահմադն ու Քրիստոսը իրարու անտես, անձանթ էկան, գնացին*՝ «երկար տարիներ անցան» (Իգդիր) և այլն: Վանի, Շատախի, Ոզմի, Մոկսի և այլ բարբառներով ասվող աղոթքներում հաճախակի կրկնվում են *քաղցրիկ Քրիստոս, բարիլուսու սիրուն Քրիստոս, բարիլուսու բարի Քրիստոս* կոչական-բառակապակցությունները²⁰:

Պոլսի բարբառում *Քրիստոսի օր* բառակապակցությունը երդման բանաձև է²¹:

Սնտիապաշտ բարբառախոսները *Քրիստոս մեր մեջը* շրջասույթով անվանում են հիվանդության մի տեսակ. «Սովորութիւն է տղու ցաւին կամ տղայոց ջղացաւութեան անունը տալու տեղը ըսել՝ *Քրիստոս մեր մեջը*»²²:

Թիֆլիսի բարբառում հանդիպում ենք *Քրիստոս* հատուկ անունով կազմված *սուտ Քրիստոս* որոշիչ – որոշյալ կապակցությունը՝ «1. խարդախ, 2. կեղծ բարեպաշտ, փարիսեցի» իմաստներով:

Վանի բարբառում *մեռնել* բային որպես հոմանիշ կա երկու տասնյակից ավելի արտահայտություն, որոնցից մեկը *Քրիստոս կանչել* ձևն է՝ դարձի եկած բողոքականների մասին²³:

Քրիստոնյա («Քրիստոսի վարդապետության հետևորդ») գրական ձևն է գործածում բարբառների մի զգալի մասը (Արաբկիր, Տիվրիկ, Ակն, Այնթապ, Նոր Նախիջևան, Ջուղա և այլն): Նոր Ջուղայում հար-

¹⁹ Տե՛ս **Թ. Դանիելյան**, Մալաթիայի բարբառը, Եր., 1967, էջ 235:

²⁰ Տե՛ս «Արծուի Վասպուրական», ի տպարանի Վասպուրական Արծույն ի Վարազ, 1862-1863, № 3, էջ 87-88:

²¹ Տե՛ս **Հ. Աճառյան**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, էջ 145:

²² «Աշխարհաբառ լեզուին քանի մը բառերը», «Մասեաց աղանի», Թեոդոսիա, 1863, № 13-14, էջ 202:

²³ Վանի բարբառում կրոնական բովանդակություն ունի նաև *վախճանվել* բայը, որն ասում էին հոգևորականների և բարի մարդկանց վերաբերյալ (**Հ. Թուրջյան**, Վանի բարբառի բառարան (ձեռագիր)):

ցումներ կատարելիս հանդիպեցինք նաև բառի՝ վերջընթեր շեշտով *քրիստոնյա* ձևին: Այդպիսի արտասանություն է գրանցված նաև Ղարաբաղի (*քիրիստոնյա*) և Մեղրու (*քրրիստոնյա*) բարբառներում:

Տարածքային մյուս տարբերակներում գրանցված են հնչյունական հետևյալ զուգաձևությունները՝ *քրրիստոնա*, *քրիստոնա* (Արարատյան, Ալաշկերտ, Ախալցխա, Թիֆլիս, Կարին, Շամախի), *քրրիստոնյա* (Կարձևան, Մալաթիա), *քրիստոնե*, *քրրիստոնե* (Բուրդուր, Պոլիս, Կեսարիա), *քրիստոնյա* (Առտիալ, Սեբաստիա, Սուչավա), *քիրիստոնյա* (Մարաղա, Սալմաստ), *քրիստոնյա* (Ասլանբեկ), *քրրիստոնյա* (Մոկս) և այլն:

Ինչպես նկատելի է, *քրիստոնյա* բառը, շնչեղ խուլերին բնորոշ բաղաձայնական օրենքի համաձայն՝ հիմնականում անփոփոխ է պահել բառասկզբի *ք* շնչեղ խուլը: Բայց Բուրդուրի (*խրիստոնյա*), Առտիալի (*խրիստոնյա*) բարբառներում, Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի խոսվածքում (*խիրիստոնյա*) *ք* շնչեղ խուլի դիմաց ունենք *խ* խուլ շփական: Հայտնի է, որ գրական թուրքերենը չունի *խ* բաղաձայն, և սպասելի էր, որ թուրքերենի լեզվական ազդեցությունն անմիջականորեն կրող բուրդուրցիներն ու համշենահայերը պետք է բառասկզբում պահպանեին թուրքերենին շատ բնորոշ *ք* պայթականը կամ, ինչպես ժամանակակից գրական թուրքերենում է, արտասանեին *խիրիստոնյա*: Ենթադրում ենք, որ հայերենից թուրքերենի արևելյան բարբառներին անցած *խ* ետնալեզվային շփականն է ազդել տվյալ տարածքների արտասանության վրա:

Քրիստոնյա գրական տարբերակը *ր* ձայնորդի անկմամբ անփոփոման է ենթարկվել Անտիոքի (*քիստոնե*) և Սվեդիայի (*քիստոնե*) բարբառներում: Նշված վայրերում այդ բառը՝ *քիստոնե* (Սվեդիա), *քիստոնե* (Յակուբիե, Արամո, Քեսաբ) իմաստափոխության հետևանքով ձևեր է բերել «հայ» և «հայերեն» իմաստները:

Թրակիայի (Էդիրնե, Չորլու, Սիլիվրի, Դեմիրքոյ, Կրկրարելի, Ուսկյուլ, Չուքագալինար, Իգնեադա, Սիսլիոբա, Լիմանքոյ, Բեյանդիք, Թեքիրդադ, Մալկարա) թրքախոս հայերի, հույների և բուլղարների շրջանում հարցումներ կատարելիս ամենուր հանդիպեցինք *hristian* կամ *hristian ermeni* («քրիստոնյա հայ»), երբեմն նաև *kiston* կամ *kiston yunan* («քրիստոնյա հույն») թուրքերեն տարբերակներին: Խարբերդի, Դերսիմի զագա և ալևին քրդերը հայերին անվանում են *sadika ermeni* («հավատարիմ հայ») կամ *sadika millet* («հավատարիմ ազգ»)՝ նկատի ունենալով հայերի մեծ ավանդն ի նպաստ Օսմանյան կայսրության: Արաբները հայերին անվանում են *مسيحية* *մեսեհիյե*, այսինքն՝ «մեսիալի», որն էլ անցել է Անտիոքի բարբառներին:

Արարատյան բարբառի Քանաքեռի խոսվածքում *քրիստոնյա* բառին հոմանիշ է *նասրանի*-ն (նաև՝ *հայ նասրանի*՝ սաստկական իմաստով), որը, կարծում ենք, *նազովրեցի* բառի հնչյունափոխված ձևն է: Ա-

րարատյան բարբառատարածքում, Շիրակում *քրիստոնյա* բառին հոմանիշ է *հոգեվախ* բարդությունը: Ընդհանրապես տարածքային բոլոր տարբերակներում *քրիստոնյա* իմաստն ունեն *կնքված* հարակատար դերբայի բարբառային համարժեքները՝ *զընքուզ* (Մասուն), *կընկըվուզ* (Մուշ) և այլն:

Միջնադարյան Հայաստանում Եվրոպայից եկածներին, անկախ նրանց ազգային պատկանելությունից, *ֆրանսիացի* բառի իմաստի լայնացման հետևանքով անվանում էին *ֆրանկ*: Թիֆլիսի բարբառում *ֆրանկ* բառը հենց «եվրոպացի» է նշանակում: Հետագայում Եվրոպայում գտնվող քրիստոնեական հոգևոր կենտրոնին՝ կաթոլիկ եկեղեցուն հարողներին ևս սկսում են անվանել *ֆրանկ*:

Ինչպես նկատում ենք, *ֆրանկ* ձևաիմաստային միավորը տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում հանդես է բերում բառիմաստային տարբերակայնություն. տեղի է ունենում բառիմաստի լայնացում և ընդհանրացում կամ բառիմաստի մասնավորեցում, նեղացում և կոնկրետացում:

Հայերենի տարածքային տարբերակներում գործածվում են կրոնական այս եզրույթի մոտ երեք տասնյակ հնչյունական զուգաձևություններ՝ *ֆիյա՛նզ* (Հաջըն), *ֆըռանզի* (Ալաշկերտի Կազի), *ֆըրէնզ* (Ռոդոսթոն), *ֆըրէնզ* (Մամոտանցի Ապարանց), *ֆըրըա՛նզ* (Մասուն, Շատախի Գյարմավ), *ֆըրընկ*, *ֆառանկ* (Ախալքալակ), ֆըրանք՝ (Բիթլիսի Դերըկ), *ֆիրանզ* (Մալաթիա), *ֆըրոնզ* (Օրդուի Չիբուխլու) և այլն:

Որպես *ֆրանկ* բառի հնչյունական զուգաձևություններ են նշված *ֆալանզ* (Վերին Բուրվարի Խորգենդ գյուղ) և *ֆըլազը* (Մասունի Քոփ): Այս հնչատարբերակները հնարավորություն են տալիս կարծելու, որ նշված բարբառաբանությունները սերում են հունարեն *φολαγγα* → *φολαγγ* (*փաղանգ*՝ «գորաբանակ») բառից²⁴:

Մի շարք վայրերի խորթ է միջինհայերենյան *ֆ*-ն, թեև այն արդեն առկա է միջին դարերում փոխառված *ֆրանկ* օտարաբանության մեջ: Դրա փոխարեն ունենք *փըռանզ* (Շուշիի Բերդաձոր, Մարտունու Նոր շեն), *փըռանկ* (Նախիջևանի Տանակերտ, Մառնետլի Դամիա, Արձեշի Խարկեն), *փըրա՛նզի* (Տիգրանակերտ), *փիռանզ* (Կապանի Ներքին և Վերին Խոտանան), *փըռանզ* (Ջրվեժ, Գեղարքունիքի Վահան, Օրդուբադի Մեսրոպավան և այլն):

Դիադինի խոսվածքում գրանցված է *ֆըրակ* հնչատարբերակը: Կարելի է ենթադրել, որ՝ ա) այդ տարածքում տեղի է ունեցել *ն* ձայնորդի անկում, բ) *ֆրակ* («եվրոպական հագուստ») բառի հետ իմաստային շփո-

²⁴ Хориков И., Малев М. Новогреческо-русский словарь, М., 1980, էջ 780, նաև՝ Ն. Հովհաննիսյան, Հայերենի հոմանշային շարքերի համադրական քննության փորձ, «Լրաբեր», 2005, № 1, էջ 33:

թության հետևանքով *Ֆրանկ*-ի փոխարեն գործածություն, գ) գրառման վրիպակ: *Ֆրանկ* բառին հոմանիշ են *ձուկ ուտող* (Նոր Նախիջևան), *պոչը կըտրած* (Պոլիս, Ախալցխա) ծածկալեզվային հարադրությունները: Նոր Նախիջևանի տարբերակը կարելի է բացատրել կաթոլիկների հոգևոր կենտրոն Հռոմի՝ ծովափին մոտիկ լինելով և հիմնականում ձկով սնվելով, իսկ պոլսեցիների և կարինցիների *պոչը կտրած* դարձվածքը՝ կուսակրոն հայրերի՝ երկար վեղարի փոխարեն թասակ կրելով:

Բարբառներում *գեգէսի* «կեսկես» (քրիստոնյա հայ և մահմեդական թուրք, Բեյլան), *քարշը-քարշը*²⁵ (մահմեդական կամ քրիստոնյա հայ և մահմեդական թուրք կամ քուրդ, Կարին), *քարըշը // քարըշըկ*²⁶ (մահմեդական կամ քրիստոնյա հայ և մահմեդական թուրք կամ քուրդ, Ամասիա, Սարգվան), *կըրմանջի* (մահմեդական կամ քրիստոնյա հայ և մահմեդական քուրդ, Վասպուրական), *մըշըրիկ*²⁷ (մահմեդական կամ քրիստոնյա հայ և մահմեդական քուրդ, Քեսաբ) անվանումներով տարբերակվում են քրիստոնյա և այլադավան, նաև մահմեդական ծնողներ ունեցող քրդացած, թրքախոս հայերը:

Այսպիսով, հայերենի տարածքային տարբերակներում քրիստոնյա (=հավատացյալ) կամ ոչ քրիստոնյա (=անհավատ) լինելն արտահայտվում է հնչյունական և բառային զուգաձևություններով, որոնք ներառվում են կրոնական բովանդակություն ունեցող իմաստային խմբի մեջ:

Բանալի բառեր – *բարբառ, բառապաշար, հնչյունափոխություն, հնչյունական տարբերակ, զուգաձևություն, հոմանիշ, հավատ, քրիստոնյա*

АЙКАНУШ МЕСРОПЯН – Характеристика диалектных слов, выражающих религиозные убеждения. – В статье рассмотрены понятия *вера* и *верить* и связанные с ними фразеологизмы. В диалектах фигурируют в основном их фонетические варианты, а также ограниченное количество синонимов.

Носители диалектов (исключая тех, кто живёт ныне в Западной Армении и отдельных районах Средней Азии), будучи, как и все армяне, приверженцами христианства, владеют религиозной лексикой и негативно характеризуют тех соотечественников, кто изменил исконной вере или нетвёрд в ней. Примечательно, что в диалектах имеются слова, определяющие лиц, чьи родители принадлежат к разным вероисповеданиям.

Ключевые слова: *диалект, чередование звуков, фонетический вариант, синоним, вера, христианин*

²⁵ Թուրքերեն՝ *karşılaşmak* - «հանդիպել», *karşı karşı* - «հակընդդեմ, ընդդիմակաց»:

²⁶ Թուրքերեն՝ *karışık* - «խառը»:

²⁷ Պարսկերեն՝ *مشرك* «բազմաստվածություն»:

HAYKANUSH MESROPYAN – *The Characteristics of the Dialect Words Expressing Religious Beliefs.* – In this article the concepts “to believe” and “belief” and the dialect expressions associating with them are discussed. In the Armenian dialects, these words generally appear in phonetic variations with a limited number of synonyms.

The majority of the Armenians dialect speakers (except for those living in the area of Western Armenia, in Chemlihemshin and Middle Asia) are the followers of Jesus Christ and they have religious vocabulary according to this faith.

The dialect speakers in a negative way distinguish the fact of instability of the faith and the practice of other beliefs. There are a number of words in the Armenian dialects which are peculiar to people who have Christian parents and those who follow other beliefs.

Key words: *dialect, vocabulary, phonetic change, phonetic variation, parallel forms, synonyms, religion, Christian*